Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

26.015

ՀՍԽՀ

# ՍՊԱՌՈՂԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՈԲԻԼԻԶԱՑԻԱՆ

ՀԱՅԿՈՈՊ

ԵՐԵՎԱՆ 1931

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ԳՐԱՌԵՊ. 6227 (Բ)
ՊԱՏՎԵՐ 1148
ՏԻՐԱԺ 500

## ԾՐՋԱԲԵՐԱԿԱՆ

### ԲՈԼՈՐ ՍՊԱՌԿՈՈՊՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՅԵՎ ԽԱՆՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻՆ, ԿՈՈՊ-ԲՅՈՒՐՈՆԵՐԻՆ, ԿՈՈՊ-ԱԿՏԻՎԻՍՏՆԵՐԻՆ, ՍՊԱՌ. ՑԱՆՑԻ ԲՈԼՈՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ, ԲՈԼՈՐ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ ՅԵՎ ԿՈԼԽՈԶՆԻԿՆԵՐԻՆ՝ ՍՊԱՌԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՇԵՖԵՐԻՆ

*Համկոմկուսի Կենտկոմի և ԿՎՀ Դեկտեմբերյան պլենումի կողմից սպառկոոպերացիայի առաջ դրված կարևոր խնդիրներից մեկը հանդիսանում է ՍՊԱՌԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՍԻՍՏԵՄԻ ՆԵՐՔԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄՈԲԻԼԻԶԱՑԻԱՆ:*

*Խորհրդային Հայաստանի սպառողական կոոպերացիան հանդիսանում է մեր ժողովրդական տնտեսության խոշորագույն ճյուղերից մեկը: Սպառողական կոոպերացիան տնտեսապես զարգանալով, ներկա տնտեսական տարում (1931 թ.) պետք է ունենա 74,0 միլյոն ռուբլու առևտրա-մթերային շրջանառություն և 21,5 միլ. ռուբլու հասարակական սննդի ձեռնարկների շրջանառություն: Առ 1-ն հունվարի 1931 թ. նրա ապրանքների և նյութերի պաշարները հասնում են մինչև 10,2 միլ. ռուբլու, շարժական գույքը՝ 0,8 միլ. ռուբլու դեբիտորական գումարները՝ 3,8 միլ. ռուբլու, խոշոր գումարների յեն հասնում նաև դրամական միջոցների մնացորդները: Վերադիր և առևտրական ծախսերն ու նյութական կորուստները 1929-30 թ. յեղել են 10,7*

Гос. Публ. Библиотека

մլն. ռուբլու, որից միմիայն նյութական կորուստները կազմում են 0,4 մլն. ռուբլի:

Սպառկոոպերացիայի շրջանառու արժեքները ֆինանսավորվում են գլխավորապես սեփական միջոցներով: Առ 1-ն հունվարի 31 թ. նրա պարտքը Պետ-բանկին կազմում է 8,6 մլն. ռուբլի և այլ փոխառու միջոցները՝ 1,8 մլն. ռուբլու:

Այդ հսկայական տնտեսական գործունեության ասպարեզում կան խոշոր հնարավորություններ մոբիլիզացիայի ենթարկելու ներքին ռեսուրսները: Սպառկոոպերացիայի 1931 թ. ֆին-պլանը հաջող կատարելու նպատակով պետք է ձեռնարկել մի շարք կարևոր և անհրաժեշտ միջոցների՝ մոբիլիզացիայի ենթարկելու ներքին ռեսուրսները և ուժեղացնելու սեփական միջոցները, որոնք պետք է ուղղվեն դեպի ապառողների ապառարկման բարելավման, մերձ-քաղաքային անտեսությունների, մեքենայացված փռերի, ֆաբրիկա-խոհանոցների շինարարության աշխատանքները և այդպիսով ազատեն սեփական միջոցները յերկրի ինդուստրացման համար:

Արագացնելով ապառ-սխեմայի ապրանքաշրջանառությունը մոտ 7 օրով, մենք կարող ենք ապրանքների պաշարները 1931 թվականի ընթացքում կրճատել 1.343.000 ռուբլով: Ռեալիզացիայի ենթարկելով ավելորդ և անհրաժեշտությունից դուրս յեկած գույքը, մենք կստանանք նոր միջոցներ մոտավորապես 160.000 ռուբլի: Լիկվիդացիայի ենթարկելով դեբիտորական գումարները կարելի յե ձեռք բերել 1.868.000 ռուբլի: Կրճատելով նյութական կորուստները կեսի չափով, կարելի յե խնայել մոտ 200 հազար ռուբլի: Մեծ հնարավորություններ կան նաև վարչա-տնտեսա-



կան ծախսերի կրճատման, դրամարկղային մնացորդների մոբիլիզացիայի, վատնումների և հափշտակումների վերացման, ինչպես և բանուժի ռացիոնալ դասավորման ասպարեզներում:

Մոբիլիզացիայի ենթարկելով ներքին, անշարժ դրության մեջ գտնվող բոլոր միջոցները, մենք կարող ենք այդ դնել կենդանի շրջանառության մեջ և դրա հետ միասին կատարելով փայակուտակման պլանը՝ ազատել մեր շրջանառությունից սեփական միջոցներն ըստ 1931 թ. ֆին-պլանի 3.727.000 ռուբլի Պետ-բանկի գծով և 600.000 ռուբլի այլ աղբյուրներով:

Ներքին ռեսուրսների մոբիլիզացիայի այդ ձեռնարկումները հաջող կերպով կիրառելու համար անհրաժեշտ է այդ աշխատանքների մեջ ներգրավել սպառկոոպերացիայի բոլոր աշխատակիցներին, ամբողջ կոոպակտիվը, բանվորներին և կոլխոզներին, ՇեՖ-կազմակերպությունները և կոոպերացված մասսաների ուշադրությունը:

Այդ աշխատանքներին հարվածային բնույթ տալու նպատակով, ինչպես և 1931 թ. և 1-ին յեռամսյակի ֆին-պլանների կատարումն ապահովելու նկատառումով Հայկոոպը, Ցենտրոսոյուզի վարչության նախագահ ընկ. Բողայեվի նամակի (տես «կոոպերատիվնայա ժիզն» № 10) համաձայն, սույն թվի փետրվարին կազմակերպվում է ՆԵՐՔԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄՈԲԻԼԻԶԱՑԻԱՅԻ «ԱՄԻՍ»:

## I. Այդ «ամսվա» կոնկրետ խնդիրները (ծրագիրը) հետեվյալն են՝ ավելորդ գույքի ռեալիզացիայի ասպարեզում.

1. Վերանայել գույքի ցուցակը և լիկվիդացիայի

ենթարկել այն մասը, որը տարիների ընթացքում կուտակվելով ներկայումս կորցրել է իր անհրաժեշտությունը:

2. Ավելորդ գույքի ռեալիզացիան հաջող կերպով անցկացնելու նպատակով դիմել տեղի կամ այլ շրջանների կազմակերպություններին իմանալու նրանց պահանջը:

3. Ավելորդ մանր գույքը և տարան վաճառել առևտրական կետերի միջոցով:

## II. Դրամական միջոցների մոբիլիզացիայի ասպարեզում.

1. Մոբիլիզացիայի ենթարկել կոոպի դրամական միջոցները խստորեն կիրառելով Հայկոոպի կողմից տրված դրամարկղի մնացորդի լիմիտը:

2. Հրահանգել բոլոր պատ–գործակատարներին, օրվա վաճառքից գոյացած կանխիկ դրամը անմիջապես հանձնել տեղի Վարկային Ընկերության կամ Խնայողական դրամարկղին:

3. Հեռավոր վայրերի բաժանմունքներում գոյացած դրամը ժողվելու համար, որոշել կոնկրետ միջոցներ (փոստը, հատուկ աշխատակից և այլն) կամ թե նշանակել որոշակի ժամկետ (ըստ բաժանմունքների հեռավորության) գործակատարի կողմից դրամը հանձնելու համար:

4. Որոշել, թե ծախսերի որ հոդվածներով կոոպվարչությունը չպետք է կատարի կանխիկ վճարումներ, փոխանցելով այդպիսին Բանկի միջոցով:



05 JAN 2010

## III. Ապրանքաշրջանառության ասպարեզում.

1. Արագացնել ապրանքաշրջանառությունը և ապրանքային պաշարը հասցնել Հայկոոպի կողմից տրված նորմային:

2. Հայտնաբերել և լիկվիդացիայի ենթարկել պառկած և անշարժ ապրանքները, որպիսի նպատակով կատարել տեղափոխություններ ուրիշ շրջաններ կամ Հայկոոպ:

3. Եթե կան թանկարժեք ապրանքներ, իջեցնել դրանց գները արագ վաճառելու նպատակով: Այդ ապրանքների մեջ չպետք է մտնեն դեֆիցիտային տեսակները:

4. Հայկոոպի կողմից տրված ապրանքների մնացորդի ընդհանուր լիմիտը բաշխել ըստ առանձին առևտրական կետերի և ըստ առանձին ապրանքների, Պլան–Տնտեսական բաժնի կողմից Ձեզ տրված ներքին պլանավորման ձևերով:

## IV. Դեբիտորական հաշիվների նկատմամբ.

1. Քննության առնել դեբիտորական գումարների ցուցակը մաքսիմալ չափով լիկվիդացիայի ենթարկելու համար:

2. Որոշել կասկածելի դեբիտորների ցուցակը և ձեռք առնել կոնկրետ միջոցներ գանձելու այդ գումարները:

3. Անհրաժեշտ դեպքում դեբիտորների գործը հանձնել դատական մարմիններին:

4. Չպարզված միջ–հիմնարկային դեբիտորական հաշիվները շտապ կարգով պարզել և փոխանցել Վարկային հիմնարկների միջոցով:

5. Վաղեմության կորցրած պարտքերը դուրս գրել բալանսից:

6. Ցեխի շրջանի պատասխանատու աշխատակիցների վրա կան պարտքեր և նրանք չեն վճարում, այդպիսիների ցուցակը պետք է ուղարկել համապատասխան մարմիններին և պատճեն Հայկոոպին:

## V. Ավելորդ բանուժի նկատմամբ.

1. Հայտնաբերել ավելորդ բանուժը:

2. Վերանայել աշխատակիցների բեռնվածությունը և անհրաժեշտ դեպքում կատարել վերաբաշխում աշխատանքների և բանուժի:

Բանուժի բեռնվածությունը հասցնել սահմանված նորմային:

## VI. Վարչա-տնտեսական ծախսերի ասպարեզում.

1. Ստուգել վարչա-տնտեսական ծախսերի կրճատման հրահանգի կատարումը:

2. Ստուգել հատուկ յեռամսյակի նախահաշվի կատարումը:

3. Վերանայել 1931 թ. և 1-ին յեռամսյակի նախահաշիվները, մաքսիմալ չափով այդ կրճատելու և տրված նորմաներին հասցնելու նպատակով:

4. Վերանայել ադմինիստրատիվ-վարչական ապարատի կազմը, ավելորդ շտատային միավորները վերացնելու համար:

## VII. Ապրանքային կորուստների ասպարեզում.

1. Կազմակերպել կոնտրոլ ապրանքային կորուստների՝ բնական պակասորդների, փչացումների և անպետքացումների մասին տրված հրահանգների կիրառման համար:



2. Վորոշել ու հայտնաբերել ապրանքային կորուստների պատճառները:

3. Տալ կոնկրետ միջոցներ ապրանքային կորուստների նվազեցման և վերացման համար:

4. Քննության առնել ապրանքների տեղափոխման և պահպանման միջոցներն ու ձևերը և անհրաժեշտ դեպքում առաջարկել ռացիոնալ միջոցներ:

5. Ուսումնասիրել նյութական կորուստների պատճառները, հասարակական սննդի և արտադրական ձեռնարկներում ու տալ անհրաժեշտ միջոցներ այդ վերացնելու համար:

6. Պարզել, թե ի՞նչ չափերով են իջեցրված նյութական կորուստները տվյալ կոոպերատիվում, առևտրական կետերում և ձեռնարկություններում:

7. Ձեռնարկել միջոցներ ապրանքային կորուստների չափը իջեցնելու մինչև տրված նորման:

## VIII. Վատնումների, հափշտակումների և պակասորդների ասպարեզում.

1. Մոբիլիզացիայի յենթարկել մասսաների ուշադրությունը վատնումների, հափշտակումների, պակասորդների և չարաշահությունների դեմ տարվող պայքարի վրա:

2. Հայտնաբերել վատնիչներին և հափշտակիչներին ու ձեռք առնել միջոցներ նրանց գործը շուտափույթ քննելու համար:

3. Բռնագանձել վատնված ու հափշտակված գումարները համապատասխան մարմինների միջոցով:

4. Հայտնաբերված վատնիչներին աշխատանքից հեռացնելու գործն անմիջապես հանձնել համապատասխան մարմիններին:

5. Կազմակերպել հասարակական-ցուցադրական դատեր վատնիչների, հափշտակիչների վերաբերմամբ:

## IX. «Ամիսը» անցկացնելու համար.

1. Անմիջապես սկսել նախապատրաստական աշխատանքներ և վերոհիշյալ (1-8. կետ) խնդիրների նկատմամբ մշակել աշխատանքների կոնկրետացրված ծրագիր, նախապես ընտրելով հատուկ յեռյակ կոոպի նախագահի, Վարկային ընկերության և Պրոֆմիության ներկայացուցիչներից:

2. Սույն շրջաբերականը ստանալուն պես սպառկոոպի ամեն մի բջիջ, ամեն մի կոոպ ակտիվիստ պետք է ստանա վորոշակի հանձնարարություն:

3. Առանձին ձեռնարկումների անցկացնելու համար, պետք է կազմակերպվեն առանձին-առանձին բրիգադներ, մասնակցությամբ սպառկոոպի հետ կապված հիմնարկ-ձեռնարկների աշխատակիցների (Վարկային հիմնարկների, Ֆինմարմինների, տրանսպորտի, կապի և այլն):

4. Անմիջապես պետք է կազմակերպվեն բանվորների և կոլխոզնիկների բրիգադներ՝ ստուգելու ապրանքային պաշարների, վաճառքի, դրամարկղի մնացորդների, ծախսերի և կորուստների փաստացի դրությունը տրված լիմիտների և նորմաների համեմատությամբ:

5. Անմիջապես պետք է առաջ բերել ներքին ռեսուրսների մոբիլիզացիայի հանդիպական պլաններ՝ առևտրական և արտադրական կետերի, ակտիվիստների և փայատերերի ժողովների ու շրջանի հիմնարկ-ձեռնարկների կողմից:

6. Առաջ բերել սոցիալիստական մրցում սպառկոոպի առանձին բջիջների բրիգադների միջև:

7. Պարգևատրել առաջարկությունները հաջող կերպով կատարող բրիգադներին, կոոպ-ակտիվիստներին և այլն, վորի համար ծրագրով պետք է նախատեսել վորոշ գումար:

8. Ներքին միջոցների մոբիլիզացիայի «ամսվա» հետևանքներն ըստ տված ծրագրի պետք է յենթարկել հաշվեառման և վորոշել, թե այդ աշխատանքներն ի՞նչ հետևանքներ են տվել թվական արտահայտությունով: Պլանը հաջող կատարող կոոպերատիվների անունները կհայտարարվեն Հայկոոպի բյուլետենում և նրանք կպարգևատրվեն:

Բոլոր ուժերը դեպի պայքար ընդդեմ կորուստների, բոլոր միջոցները մատակարարման բարելավման և յերկրի ինդուստրացման համար:

Հայկոոպի վարչության փոխ-նախագահ՝
Ա. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Պլան-տնտ-բաժնի՝ եկոնոմիստ կոնսուլտանտ
Խ. ՔԱՐՀԱՆՅԱՆ

№ 2-3-13
«10» փետրվարի 31 թ.
Յերեվան

№ 3-2-13
11/II-31 թ.

**ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ**

## ԲՈԼՈՐ ՇՐՋԿՈՈՊՆԵՐԻՆ ՅԵՎ ԲԱՆԿՈՈՊՆԵՐԻՆ

Սպառկոոպերացիայի սիստեմայի 1931 թվ. և I-ին յեռամսյակի ֆինպլանների հաջող կատարման կարևոր ողակներից մեկը հանդիսանում է ազգաբնակչության միջոցների մոբիլիզացիայի՝ փայակուտակման, ավանսների. ավանդների և նպատակային մուծումների պլանի լրիվ կատարումը, ինչպես և ապրանքների ռեալիզացիայի ու մնացորդների կրճատման խնդիրները:

Հատուկ յեռամսյակի և 1931 թվ. հունվար ամսվա հաշվետու տվյալները ապացուցում են, որ մեր ցանցի կոոպերատիվների մի մասը դեռ ևս չի կարողացել ըմբռնել այդ խնդիրների կարևոր նշանակությունը և այդ աշխատանքները թողնելով ինքնահոսի՝ տվել են կոնտրոլ թվերի զգալի թերակատարում:

Փայակուտակման ասպարեզում մեր ցանցը հատուկ յեռամսյակի պլանը կատարել է 95,6 %, կամ 1000,3 հազ. ռուբլի հանդեպ պլանի 1046,0 ռուբլու: Ավելի խոշոր թերակատարում ունեն Շրջկոոպները (88,5 %), որը բացարձակ գումարով կազմում է 83,1 հազ. ռուբլի: Շրջկոոպներից մի քանիսը տրված կոնտրոլ թիվը կատարել են ավելի խայտառակ կերպով. Բեյուք-Վեդի՝ 46,8 %, Ն. Բայազետ՝ 47,0 %, Ն. Ախտա՝ 55,0 %,



Մեղրի՝ 56,0 %, Վաղարշապատ՝ 69,1 %, Կոտայք՝ 69,4 % և այլն: Ընդհանուր առմամբ շրջկոոպներից պլանը թերակատարել են 19 կազմակերպություններ: Չնայած որ բանկոոպները միասին պլանը գերակատարել են 12,6 %, բայց և այնպես այդտեղ ևս կան կոոպերատիվներ, որոնք կամ խոշոր չափով թերակատարել են պլանը (Անի-պեմզա՝ 55,6 %), կամ թե լայն կերպով չեն օգտագործել յեղած հնարավորությունները:

Չը նայած, որ 1930 թվ. դեկտեմբեր ամսվա ապրանքների ռեալիզացիայի կոնտրոլ թիվը ամբողջ ցանցը գերակատարել է 12,3 %, բայց և այնպես այդտեղ ևս կան մեծ թվով կոոպերատիվներ (14 շրջկոոպ և 3 բանկոոպ), որոնք տվել են խոշոր թերակատարում: Չեն կատարված նաև առ 1-ն հունվ. 31 թ. ապրանքների մնացորդների կոնտրոլ թվերը. կան կոոպերատիվներ, որոնք ունեն նույնիսկ յերեք-չորս անգամ ավելի պաշարներ կոնտրոլ թվի համեմատությամբ:

Դրությունը մխիթարական չէ նաև 1931 թ. միջոցների մոբիլիզացիայի հունվար ամսվա կոնտրոլ թվերի կատարման ասպարեզում: Հունվար ամսվա փայակուտակման կոնտրոլ թիվը (297,4 հազ. ռուբ.) ցանցը կատարել է 90,2 % (268,4 հազ ռ.), իսկ I-ին յեռամսյակի կոնտ. թիվը՝ 31,6 %. խոշոր չափով հետ են մնում բանկոոպները (առանց Յերբանկոոպի)՝ 74,7 % և 26,1 %: Անթույլատրելի կերպով հետ են մնում հատկապես. Շամշուլը՝ 17 %, Ղարաքիլիսայի բանկոոպը՝ 34 %, Լեռնագործը՝ 47,1 %, Լենբանկոոպը՝ 60,4 % և ուրիշները: Հունվար ամսվա փայակուտակ-

ման կոնտ. թվերը չեն կատարել նաև շրջկոոպները՝ 93,6 %, իսկ I-ին յեռամս. կոնտր. թվի հանդեպ՝ 32,8 %: Այստեղ ևս կան կոոպերատիվներ, վորոնք հազիվ մեկ քառորդի չափով են կատարել հունվար ամսվա կոնտրոլ թիվը: Յեվ յեթե աչքի առաջ ունենանք նաև հատուկ յեռամսյակի փայակուտակման պլանի թերակատարումը, վորը բոլոր կոոպերատիվները պարտավոր եյին լրացնելու հունվար ամսում, այդ դեպքում ընդհանուր թերակատարման գումարը հատուկ յեռամսյակում և 31 թ. հունվար ամսում կկազմի 74,7 հազ. ռուբլի (45,7 հ.ռ.+29,0 հ.ռ.): Փայակուտակման պլանի կատարման վերաբերմամբ բերած թվերը ցույց են տալիս, վոր ցանցի կողմից հատուկ յեռամսյակում ձեռք բերած տեմպերը հունվար ամսում թուլացել են (95,6% և 90,2 %), վորը հատկապես պետք է ընդգծել բանկոոպների նկատմամբ (112,6 % և 74,7 %):

1931 թվ. հունվար ամսում նաև թերակատարված է ապրանքների ռեալիզացիայի պլանը 93,8 % (6600,0 հազ. ռուբ. դիմաց 6194,0 հազ. ռ.), վորի հետևանքով առ I-ն փետրվ. 31 թ. դարձյալ չի իրականացված ապրանքների մնացորդների լիմիտը, և փաստացի մնացորդի գումարը մոտ յերկու անգամ ավել է լիմիտից:

Թե հատուկ յեռամսյակում և թե հունվար ամսում ցանցի կողմից չեն ներկայացրված լրիվ տվյալներ ավանսների, ավանդների և նպատակային մուծումների գանձման մասին: Յեղած տվյալները ցույց են տալիս, վոր այդտեղ ևս մենք ունենք խոշոր բաց:



Յելնելով վերոհիշյալ տվյալներից Հայկոոպի վարչությունը հրահանգում է ձեզ (տես հեռագիր 10/I-31 թ. № 3-5-41) մինչև փետրվարի 20-ը կատարել I-ին յեռամսյակի փայակուտակման կոնտրոլ թվի 80 %-ը, նաև լրացնելով այն թերակատարումը, վորը տեղի յե ունեցել հատուկ յեռամսյակում:

Միաժամանակ I-ին յեռամսյակի և 1931 թ. փայակուտակման պլանները հաջող կատարելու համար, առաջարկվում է ձեզ կիրառել հետևյալ ձեռնարկումները:

1. Համաձայն դիֆփայերի վորոշել անդամների փայավճարային պարտքն ըստ առանձին բնակավայրերի և կոլեկտիվների և կազմել հատուկ ցուցակ:

2. Փայավճարային պարտք ունեցողների ցուցակը կախել խանութի աչքի ընկնող տեղում, կամ կոլեկտիվներում:

3. Պարտքերի մասին հատուկ գրությամբ հայտնել փայատերերին:

4. Փայակուտակման ամսական կոնտրոլ թիվը բաշխել ըստ առևտրական կետերի, կոլեկտիվների և ըստ 10-որյակների:

5. Ընտրել փայավճարների գանձման համար հատուկ անձնավորություն կոոպակտիվից, պրոֆակտիվից, խանութային հանձնաժողովից, կոոպաշխատակիցներից և այլն ու կցելով նրանց առանձին կոլեկտիվների կամ շրջանների՝ պարտավորեցնել կատարելու տրված կոնտրոլ թիվը:

6. Բոլոր առևտրական կետերում և կոլեկտիվնե-

րում կազմակերպել փայավճարների ընդունման գոր-ծը:

7. Կազմակերպել փայատերերի ժողովներ բոլոր բնակավայրերի և կոլլեկտիվների ու առաջ բերել այդ-տեղ հանդիպական պլաններ:

8. Կազմակերպել ստուգում առանձին բնակա-վայրերի, կոլլեկտիվների, ինչպես և առանձին գան-ձողների մեջ, տրված կոնտրոլ թիվը հաջող կատարե-լու ասպարեզում:

9. Կարգադրել դադարեցնելու դեֆիցիտային ապ-րանքների մատակարարումն այն անդամներին, վո-րոնք տրված ժամկետում չեն մուծել հասանելիք փա-յը:

10. Պարգևատրել փայակուտակման կոնտրոլ թի-վը կատարող առանձին գանձողներին և կոլլեկտիվնե-րին ու բնակավայրերին և նրանց ցուցակը հրապարա-կել: Միաժամանակ ստեղծել համապատասխան ֆոնդ:

Ավանսների, ավանդների և նպատակային մու-ծումների գանձումն ուժեղացնելու համար առաջարկ-վում է խստորեն կիրառել այդ առթիվ մեր կողմից տրված նախկին շրջաբերականները:

Իսկ ապրանքների ռեալիզացիայի բարձրացման և մնացորդների կրճատման վերաբերմամբ առաջարկու-ենք կիրառել ներքին ռեսուրսների մոբիլիզացիայ մասին մեր տված № 3-2-13 10/II-31 թ. շրջաբերակա-նի համապատասխան ցուցմունքները:

Հայկոոպի վարչ. փոխ նախ.՝ (Ա. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Պլան-տնտ. բաժնի վարիչ՝ (Հ. ԲԱԼՅԱՆ

Եկամտահավաք—կոնտրոլյորտ՝



Гос. Публ. Библиотека им. А.
ՀՀ Ազգային գրադարան
NL0197852